## ՍՏԵՓԱՆ ԱՎԱԳՅԱՆԻ ՀՈՒՇԱՄՐՑԱՇԱՐ 2026

## ԲԼԻՑ ՄՐՑԱՇԱՐ

Հայաստանի շախմատի ակադեմիան Շախմատի ակադեմիայի ակումբի հետ համատեղ **մայիսի 30-ին, ժամը 16:00-ին** կազմակերպում է ԲԼԻՑ ՄՐՑԱՇԱՐ, շվեյցարական մրցակարգով, 9 խաղափուլով՝ համաձայն ՖԻԴԵ-ի շախմատի կանոնների: Մրցաշարում կիաշվարկվի միջազգային (ՖԻԴԵ) կայծակնային վարկանիշ: Մրցաշարի մասնակիցները պետք է պարտադիր ունենան ՖԻԴԵ-ի նույնականացման համար /**FIDE ID**/:

Մրցաշարին կարող են մասնակցել առնվազն **երկրորդ կարգ** ունեցող շախմատիստները:

### Ժամակարգ

3 րոպե ամբողջ պարտիայի համար՝ յուրաքանչյուր քայլի համար 2 վայրկյան հավելումով՝ սկսած առաջին քայլից:

### Լրացուցիչ ցուցանիշներ

Հավասար միավորներ վաստակելու դեպքում մրցանակները չեն կիսվում, իսկ տեղերը կորոշվեն. հատված Բուխգոլցով, այնուհետև Բուխգոլցով, անձնական հանդիպումների արդյունքի /արդյունքների/ և սև գույնով խաղացած պարտիաների քանակով:

| **Մրցանակներ** | |
|---|---|
| **Հիմնական** | **Հատուկ** |
| **I** | Լավագույն արդյունք ցույց տված **շախմատիստուհի** |
| **II** | Լավագույն արդյունք ցույց տված մինչև **14 տարեկան մասնակից** |
| **III** | Լավագույն արդյունք ցույց տված մինչև **12 տարեկան մասնակից** |
| **IV** | Լավագույն արդյունք ցույց տված մինչև **12 տարեկան աղջիկ մասնակից** |
| **V** | Լավագույն արդյունք ցույց տված մինչև **10 տարեկան մասնակից** |
| | Լավագույն արդյունք ցույց տված մինչև **10 տարեկան աղջիկ մասնակից** |

Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի ստանալու միայն մեկ մրցանակ:

- Մրցանակները **կչնորհվեն, եթե** յուրաքանչյուր տարիքային խմբում (Մ10, Մ12, Մ14) լինի առնվազն 2 շախմատիստի մասնակցություն

Մասնակիցների քանակը սահմանափակ է:

## Մուտքավճար

| Կոչում/գործակից | Մուտքավճար |
|---|---|
| ՄԳ, ՄՎ, ԿՄԳ, ԿՄՎ | Անվճար |
| 2101 և ավելի բլիցի միջազգային վարկանիշ ունեցող մասնակիցներ | 4 000 ՀՀ դրամ |
| Մինչև 2100 բլիցի միջազգային վարկանիշ ունեցող մասնակիցներ | 5 000 ՀՀ դրամ |
| Միջազգային վարկանիշ չունեցող մասնակիցներ | 6 000 ՀՀ դրամ |

Մրցաշարի մասնակիցները պետք է պարտադիր ունենան **ՖԻԴԵ-ի նույնականացման համար /FIDE ID/: ՖԻԴԵ-ի նույնականացման համար** չունենալու դեպքում մինչև մայիսի 28-ը դիմեք Հայաստանի շախմատի ֆեդերացիա կամ այցելեք հետևյալ հղումով՝ **https://chessfed.am/am/fide-registration-form**:

Մրցանակային ֆոնդը կկազմի մուտքավճարների 60%-ը:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒ՛Ն** – Մրցաշարին կարող եք գրանցվել **ՄԻԱՅՆ ՕՆԼԱՅՆ** տարբերակով մինչև մինչև **մայիսի 28-ը, 18:00-ն**:

Գրանցվելու համար անցե՛ք հղումով՝ https://chessacademy.am/payment/form/14?lang=am կամ Հայաստանի շախմատի ակադեմիայի կայքէջում https://www.chessacademy.am/ անհրաժեշտ է սեղմել **ԳՐԱՆՑՎԵԼ** կոճակը, ընտրել մրցաշարը, լրացնել բոլոր դաշտերը և կատարել վճարումը: